**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» սեպտեմբերի 2024թ. № **120-Ա**

# ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 76-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19062024-06-0001 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ հա մայնքի սեփականություն հանդիսացող 06-095-0246-0039 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,273 հեկտար մակերեսով 4-րդ կարգի արոտավայր հողատեսքի հողամասը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:

2. Հողամասի մեկնարկային տարեկան վարձավճարը սահմանել՝ 4 400 ՀՀ դրամ, վարձակալության տրամադրման ժամկետը՝ 25 տարի:

| ԿՈՂՄ ( 12) | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 4 ) |
|---|---|---|
| ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ | | ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ | | ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ |
| ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ | | ԳՈՒՐԳԵՆ ՓԻԼՈՅԱՆ |
| ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ | | ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ |
| ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ | | |
| ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ | | |

ԿՈՂՄ ( 12) ԴԵՄ ( 0 ) ՁԵՌՆՊԱՀ ( 4 )

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ________________ Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 10
ք. Սպիտակ